

Սիրելի Մելգոնեանցիներ եւ Բարեկամներ,

Արդէն իսկ բոլորեցինք տարեշրջան մը, այն օրէն, երբ լսեցինք առաջին «ըսի-ըսաները»՝ մեր Հաստատութեան փակման առնչուող: Անցնող տասներկու ամիսները եղան ցասումի, բարկութեան եւ անձկութեան ժամանակաշրջան՝ սուտերով, նենգութիւններով եւ դաւադրութիւններով լեցուն: Ան եղաւ նաեւ մեր տկարութիւններուն գիտակցելու եւ մեր ուժերը վերագնահատելու ժամանակաշրջանը:

Մենք ունինք նոր կառոյց մը՝ ժողովրդավարութեան եւ թափանցիկութեան սկզբունքներու վրայ հիմնուած: Երեւոյթ մը, որ դժբախտաբար, հազուադիւտ պարագայ է Հայկական կազմակերպութիւններու մէջ:

Ինչպէս կը յիշէք, գրեթէ տարի մը առաջ, մենք ունեցանք այժմու վարչութեան ընտրութեան ժողովը: Այն ժամանակ երբ «ըսի-ըսաներ»ը սկսած էին շրջիլ, իսկ մեր Մեծ Միութենէն ոչ մէկ տեղեկութիւն կը հասներ հանրութեան:

Կացութիւնը յստակացնելու մտադրութեամբ Պրն. Պետրոս Գալայճեան հանդիպում մը կայացուց Փարիզի մէջ, ՀԲԸՄ-ի նախագահ Պրն. Պերճ Սեդրակեանի հետ: Հանդիպումը յստակ ցոյց տուաւ որ Պրն. Սեդրակեան տրամադիր չէր լսելու մեր պետական ներկայացուցիչը:

Երբ տարածայնութիւնները սկսան ծաւալիլ, Ղեկտմբեր 2003-ին սկիզբները, նախագահ Պերճ Սեդրակեանին գրաւոր ներկայացուցիչք մեր մտահոգութիւնները եւ առաջարկեցինք նորակազմ վարչութեան մը ստեղծումը, բաղկացած՝ գործունեայ անդամներէ, տեղացի մասնագետներէ, որոնք արդիւնաբեր համագործակցութիւն կրնային ստեղծել ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան հետ եւ ծառայել Մելգոնեանին: Մեր առաջարկը կ'ենթադրէր գործ ունենալ Հաստատութեան նիւթական հարցերով եւ բարելաւել վարչական աշխատանքը:

Յունուար 2004-ին Պրն. Սեդրակեանը հաստատեց պարզապէս թէ ինք ստացած է մեր նամակը: Յետոյ տիրեց լռութիւնը:

Ապա Կիպրոս ժամանեց Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Պրն. Պենոն Սեւանը: Ան եկած էր մեզ համոզելու համար փակման որոշումի առաւելութիւններու մասին: Մեր ճիգերը այս անգամ ուղղուեցան, Պրն. Սեւանի ալ միջնորդութեամբ, Կեդրոնական Վարչութեան հետ կապի շարունակականութիւնը վերականգնելու եւ Հաստատութեան վերելքը ապահովելու համար գործակցելու, թերութիւնները նուազեցնելու համար (նախ վերջ տալով մսխումին եւ սխալ տնօրինումին): Պրն. Սեւան իր մեկնումէն ետք մինչեւ այսօր կը մնայ լուռ:

Յաջորդող հանգրուանին, Սանուց Միութիւնը ընտրեց պատգամաւորական խումբ մը՝ Նիւ-Եորք մեկնելու համար: Նախքան պատուիրակութեան մեկնումը, Կեդրոնական Վարչութեան ներկայացուցեալ օրակարգի առաջարկ մը եւ այս առիթով ուղեցինք հաստատել թէ այս հողերու վաճառքը չէ իրականացած: Մեր առաջարկած օրակարգը մերժուեցաւ Պրն. Սեդրակեանի գործակից, կրթական գործերու պատասխանատու՝ Տիկ. Գարօյ Ասլանեանի կողմէ (անձ մը, որ մեծապէս պատասխանատու է Հաստատութեան ներկայ վիճակէն, քանի ան է, որ ութ տարիներու ընթացքին հոգաբարձական մարմնէն խլած է իրաւասութիւնները եւ ամբողջութեամբ յանձնած՝ մէկ անձի՝ տնօրէնուհիին ձեռքը):

Հակառակ Սանուցի հետ հանդիպումի առաջարկին ստացած մերժումին, Պրն. Գալայճեան մեծ հաւատքով որոշեց Նիւ-Եորք երթալ, ընկերակցութեամբ՝ Դոկտ. Ագապի Նասիպեան-Էքմէքճեանի (Նախկին տնօրէնուհի), եւ Պրն. Հրաչ Մանուկեանի (ՀԲԸՄ-ի վեթերան անդամ, ներկայիս վարչական

պատասխանատուն Մելգոնեան Առեւտրական Կեդրոնին եւ մտերիմ ընկեր՝ Պրն. Պերճ Սեդրակեանին):

Սեր պատգամաւորները Նիւ-Եորք մեկնեցան տազնապի լուծման առաջարկներով: Արժանացան ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան կտրուկ եւ ամբողջական մերժումին, ինչպէս նաեւ արհամարհական կեցուածքին:

Տարածայնութիւնները շարունակեցին, ուրացումները անոնց հետեւեցան, կալուածներու վաճառքի մասին շրջեցան բազմաթիւ տարբերակներ: Այս մթնոլորտին մէջ, 16 Մարտ 2004-ին, ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը դաշոյնը խրեց Մելգոնեանի սրտին, մահուան դատապարտելով կտակ մը եւ յաջորդ սերունդներու ապագան: Անհիմն փաստարկներու վրայ յենած՝ Զաստատութեան փակման վերջնական որոշումը, նոյնիսկ ԶԲԸՄ-ի նպատակին ուղղուած դաւադրութիւն է: Անոնք ոտնակոխեցին Մելգոնեան եղբայրներու կտակը: Կտակ մը, որուն եկամուտը հաւանաբար հիմնական աղբիւրը դարձաւ ԶԲԸՄ-ի բազմաթիւ ծրագիրներու իրագործման:

Կանխատեսելով նման որոշում մը, կացութեան մասին տեղեկացուցած էինք Կիպրոսի Կրթութեան եւ Ներքին գործոց նախարարները եւ խորհրդարանը: Ազգային խորհրդարանը հրաւիրեց Բարեգործականի պաշտօնեայ Կորտըն Անտերսըն, որպէսզի ան բացատրութիւններ տայ փակումը փոխարինող ծրագիրներու մասին: Գործ մը, աշխատանք մը, որ մինչեւ օրս մնաց անկատար: Ան վիրաւորեց Կիպրոսի խորհրդարանականները եւ «թքեց» իշխանութիւններու երեսին: Կիպրոսի կառավարութեան աչքին ան ներկայացաւ, որպէս ամօթ: Իր կեցուածքով, Միութեան վարկը բեկանող այս անհատին համար Կիպրոսի Պետութիւնը նուաստացման արժանի «Երրորդ Աշխարհի» մէկ անդամն էր:

Կիպրոսի խորհրդարանի անդամները նեցուկ կանգնեցան մեզի, ներկայ գտնուեցան մեր գլխաւոր ցոյցին, որ տեղի ունեցաւ 24 Մարտին: Յոյց մը, որ մեծ յաջողութիւն արձանագրեց արժանանալով Զայ եւ Յոյն հանրութեան ամբողջական նեցուկին:

26 Մարտի խորհրդարանի խիստ բանաձեւումը համագործակցութեան կոչ կ'ընէր ԶԲԸՄ-ին, որպէսզի ան Սանուցի եւ համայնքին հետ լուծում որոնէ տազնապին: **Կիպրոսի խորհրդարանին մէջ, Ցեղասպանութեան ճանաչումէն ետք, միաձայնութեամբ որդեգրուած երկրորդ որոշումն էր այս:**

Զանրայայտ ոտնձգութիւններու կողքին, ԶԲԸՄ-ը ապաւինեցաւ Զայաստանի Արտ. Գործ. Նախարար՝ Պրն. Վարդան Օսկանեանին, որպէսզի ան Կիպրոս գայ եւ համոզէ կառավարութիւնը, շէնքերու «պատմական ժառանգ»ի իրավիճակը վերացնելու համար: Պրն. Նախարարը մեզի խոստացաւ միջնորդել Պրն. Սեդրակեանի հետ կապ հաստատելու համար: Ան Կիպրոսէն մեկնեցաւ դատարկ ձեռքերով եւ իր մեկնումէն վերջ ոչինչ լսեցինք իրմէ Մելգոնեանի մասին:

Այն օրուրնէ ի վեր, մենք մեր կարելին ըրինք ապահովելու համար Մելգոնեանին գոյերթը: Նախ՝ «Պատմական ժառանգութիւն» իրավիճակի հռչակմամբ եւ ապա պետական իշխանութիւնները Զաստատութեան իրավիճակին մասին շարունակ տեղեակ պահելով:

Ներկայիս Կեդրոնական Վարչութիւնը համաձայնած է երկու նիկոսիացի փաստաբաններու՝ Նայիրի Մըրիէժ Տէր Առաքելեան եւ Խրիստոս Թրիանտաֆիլիտեսի հետ, պաշտպանելու համար իր շահերը եւ ջբացնելու համար շէնքերու «Պատմական ժառանգ» դառնալու իրավիճակը: Ճարտարագետ եւ գործարար Նազօ Դաւիթեան նոյնպէս շահագրգռուած է կալուածի վաճառքի հարցերով եւ կը փորձէ ազգային այս արժէքին կողոպուտին մաս կազմել: Մինչ Զրաչ Մանուկեան եւ ԶԲԸՄ-ի Նիկոսիոյ ատենապետ՝ Գարեգին Կոստանեան,

ներկայիս կ'օգնեն Կորտըն Անտերսընին՝ Հաստատութեան վարչական եւ ֆինանսական աշխատանքներու ծիրէն ներս:

Մեր կողմէ, մենք համաձայնած ենք կիպրական իրաւաբանական ընկերութեան մը հետ, իսկ Գալիֆորնիոյ մեր քոյրերն ու եղբայրները՝ այլ ընկերութեան մը հետ: Չոյգ ընկերութիւնները կը համադրեն իրենց աշխատանքները ՅԲԸՄ-ի Մելգոնեանի կտակին հանդէպ գործադրած ոտնձգութեան դէմ դատական պայքարին, ջնջելու համար Հաստատութիւնը փակելու անամօթ որոշումը, եւ կանխելու համար վերջին դաւադրութիւնը՝ կալուածները ծախելու արարքը ձախողեցնելու համար:

Մենք ամէն ճիգ ի գործ դրինք նաեւ վերականգնելու համար մեր անդամագրութիւնը, մանաւանդ անցնող վերջին տասնամեակներու շրջանաւարտներով: Բազմաթիւ մելգոնեանցիներ եւ բարեկամներ դրականօրէն ընդառաջեցին մեր կոչին: Գալիֆորնիոյ Սանուըր եւ բարեկամները հանգանակեցին \$25.000 եւ երաշխաւորեցին մօտաւորապէս \$100.000 որ պիտի օգտագործուի Մելգոնեանը փրկելէ ետք: Գանատայի Սանուըր նոյնպէս հանգանակած է մեծ գումար մը եւ մօտաւորապէս \$75.000 վերապահած է նոյն նպատակին համար: Լիբանանի Սանուըր նոյնպէս տարած է հանգանակութեան յաջող աշխատանք մը:

Այժմ մենք կը կազմակերպենք ճաշկերոյթ մը, որուն պիտի մասնակցի նաեւ Պրն. Ժագ Մելգոնեանը՝ մեր պատուոյ հիւրը: Ծաշկերոյթը տեղի պիտի ունենայ Կիրակի 7 Նոյեմբեր 2004-ին, «Խրիսթիանա» Ալամպրայի շրջանը:

Որպէս մուտքի գին ճշդուած է 15 կ.ո.՝ չափահասներու համար, իսկ երախաներու համար՝ 5 կ.ո. : Հանգանակութեան բոլոր հասոյթը պիտի տրամադրուի մեր պայքարին եւ դատական ծախսերուն համար:

Մեծ հաւատք ունինք մեր պայքարի յաջողութեան:

Ձեր մասնակցութեամբ, մենք պիտի կարենանք իրականացնել մեր երազները եւ Մելգոնեանը վերածել 21րդ դարու կրթական առաջնակարգ հաստատութիւններէն մին, որուն արժանի է մեր սիրելի Հաստատութիւնը:

Մենք վստահ ենք որ ձեզմէ շատեր, որոնք կը հակադրուին Հաստատութիւնը փակելու եւ հողերը վաճառելու որոշումին, կրնան ըսել. «Մենք ի՞նչ կրնանք ընել. անոնք ուժեղ են եւ վերջաւորութեան պիտի շահին»: Մենք կ'ըսենք՝ ընդհակառակը, **շնորհիւ մեր բոլորին ճիգերուն եւ կառավարութեան օգնութեամբ յաջողեցանք կասեցնել կայուածի վաճառքը. այս փաստը ինքնին յաջողութիւն մըն է**, որ մեզ կը մղէ շարունակելու աշխատանքը մեր շատ սիրելի Հաստատութիւնը փրկելու եւ ապահովելու անոր գոյերթը:

Մի՛ յուսահատիք, միացէ՛ք մեր պայքարին, մեր դատը ճիշդ է եւ մենք անպայման պիտի յաջողինք: **«Միութիւնը Չորութիւն է»:**

Ձեր զօրակցութեան համար կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները:

Մելգոնեանցիական ջերմ զգացումներով՝
Կիպրոսի Սանուըր Միութիւն

Ատենապետ՝
Շաւասպ Պոհճալեան

Փոխ ատենապետ՝
Մասիս Տէր Բարթող

Նիկոսիա, 7 Հոկտեմբեր 2004